



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2020 թ.

«Tert.am» ԿԱՅՔԻ ԼՐԱԳՐՈՂ
ՏԻԿԻՆ Ա.ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻՆ
arpinehakhverdyan94@gmail.com

Ձեր 15.06.2020թ. տեղեկատվություն ստանալու հարցմանը.

Հարգելի՛ տիկին Հախվերդյան,

Ձեր կողմից ներկայացված տեղեկատվություն ստանալու հարցմանը ըստ կետերի հայտնում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզպետարանը չի իրականացնում (իրականացրել) թափառող շների հաշվառում, ուստի մարզում թափառող շների քանակի վերաբերյալ տեղեկատվություն չենք կարող տրամադրել՝ տեղեկատվության բացակայության պատճառով:

2. Լոռու մարզում թափառող շների համար հատուկ նախատեսված վայրեր չկան:

3. Լոռու մարզպետարանը հանդիսանալով բյուջետային հիմնարկ պետական բյուջեի միջոցները կարող է ծախսել միայն բյուջեով նախատեսված նպատակային ծախսեր կատարելու ուղղությամբ: Թափառող շների վնասագերծման կամ գլխաքանակի աճը վերահսկելու նպատակով բյուջեով միջոցներ չեն նախատեսվել և չեն ծախսվել:

4. Լոռու մարզում շների վնասագերծում (ստերջացում, ոչնչացում, պատվաստում) չի իրականացվում:

5. 2018, 2019, 2020թթ.-ին շների ստերջացում չի իրականացվել:

6. 2018, 2019, 2020թթ.-ի ընթացքում մարզում ոչնչացված շների քանակի վերաբերյալ մարզպետարանը տեղեկատվություն չի տնօրինում: Լոռու մարզպետարանի կողմից թափառող կենդանիների ոչնչացման գործընթաց երբեք չի իրականացվել:

Հայտնում եմ նաև, որ թափառող կենդանիների նկատմամբ միջոցառումների իրականացումը ՀՀ օրենսդրությամբ վերապահված է համայնքապետարաններին: Լոռու մարզի Վանաձոր և Սպիտակ համայնքների կողմից թափառող կենդանիների (շների) ստերջացման և այլ գործողությունների կատարման համար հայտարարվել են մրցույթներ, սակայն մրցույթները չեն կայացել՝ մրցույթներին դիմող կազմակերպության բացակայության պատճառով:

Invalid signature

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հարգանքով՝

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ